ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 02 2025թ.
№ ԳԱՍ-գԿԼ-239

«Պատնեշ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 03013824)
տնօրենի պաշտոնակատար՝ Հ. Շահինյանին
հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, Գործարանային փ. 16
հեռ. 055-33-23-11
էլ. հասցե՝ patnesh1@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պատնեշ» ՓԲԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-5-5 գնման պայմանագրի (փոփոխություն №1 առ 23.03.2023թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը սույն Պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով պետք է մատակարարեր 35 լրակազմ ապրանք, որից 15 լրակազմը՝ 2022 թվականին, 10 լրակազմը՝ 2023թ. 3-րդ եռամսյակում, 5 լրակազմը՝ 2023թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 08.12.2023թ., իսկ 5 լրակազմը՝ 2024թ. 3-րդ եռամսյակում: Սակայն Ձեր ընկերությունը 35 լրակազմից մատակարարել է ընդամենը 25-ը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ չմատակարարված 10 լրակազմ ապրանքի մասով գնման պահանջը վերացել է Պատվիրատուի մոտ, ուստի ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. փետրվարի 26-ին Պայմանագիրը 1-ին չափաբաժնի՝ 10 լրակազմի մասով լուծել է՝ «Պատնեշ» ՓԲԸ-ի նկատմամբ չկիրառելով պայմանագրով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները, քանի որ պայմանագրի ամբողջական չկատարման համար ընկերությունը մեղավորություն չունի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am